ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 23/01

Վայք համայնք
(կնքման վայրը)

«10» հունվարի 2023 թ.

Վայքի համայնքապետարանը, այսուհետ՝ «Փոխատու», ի դեմս համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյանի, որը գործում է Վայքի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ-ը, այսուհետ՝ «Փոխառու», ի դեմս «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ –ի ժ/պ Վարդան Ավետյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Փոխատուն պարտավորվում է Փոխառուի ժամանակավոր, անհատույց օգտագործմանը հանձնել 1.2. կետում նշված գույքը, իսկ Փոխառուն պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

1.2. Փոխատուն Փոխառուի ժամանակավոր, անհատույց օգտագործմանն է հանձնում հետևյալ գույքը՝ /տես Հավելված 1/, այսուհետ՝ «Գույք»:

1.3. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Փոխատուին:

1.4. Գույքի հանձնումը ձևակերպվում է հանձնման-ընդունման ակտով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Փոխատուն իրավունք ունի՝

2.1.1. Փոխառուից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2. եթե ծանուցվել է Փոխառուի պահանջների կամ Գույքի թերությունները Փոխատուի հաշվին վերացնելու մտադրության մասին, Գույքը փոխարինել պատշաճ վիճակում գտնվող այլ նմանօրինակ Գույքով.

2.1.3. Գույքն օտարել երրորդ անձի: Ընդ որում, նոր սեփականատիրոջն են անցնում սույն պայմանագրով նախատեսված Փոխատուի իրավունքները, իսկ Գույքը մնում է ծանրաբեռնված Փոխառուի իրավունքներով.

2.1.4. Փոխառուից պահանջել կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.

2.1.5. Փոխառուից պահանջել Գույքը պահել սարքին և վերադարձնել սույն պայմանագրի 1.1. կետում նշված վիճակում:

2.2. Փոխատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում.

2.2.2. Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.3. Գույքը հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (օգտագործման հրահանգ, տեխնիկական անձնագիր).

2.2.4. Փոխառուին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին.

2.2.5. Փոխառուին զգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին: Գույքն անհատույց օգտագործման հանձնելը հիմք չէ դրա նկատմամբ երրորդ անձանց իրավունքները փոփոխելու կամ դադարելու համար:

2.3. Փոխառուն իրավունք ունի՝

2.3.1. պայմանագիրն ստորագրելուց 3 (երեք) օր հետո պահանջել Փոխատուից հանձնելու սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը՝ դրա բոլոր պատկանելիքներով և փաստաթղթերով.

2.3.2 Փոխատուի կողմից Գույքի թերությունների մասին չհայտնելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3. Գույքը երրորդ անձի օգտագործմանը հանձնել միայն Փոխատուի համաձայնությամբ:

2.4. Փոխառուն պարտավոր է՝

2.4.1. Գույքը պահպանել սարքին վիճակում.

2.4.2. կատարել Գույքի պահպանման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը.

2.4.3. Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.4.4. կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.

2.4.5. Գույքը վերադարձնել Փոխատուին՝ սույն պայմանագրի 1.1. կետում նշված վիճակում:

3. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

3.1. Փոխատուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե Փոխառուն՝

3.1.1. Գույքն օգտագործել է պայմանագրին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան .

3.1.2. չի կատարել Գույքի պահպանման՝ այդ թվում՝ ընթացիկ և հիմնական վերանորոգում կատարելու իր պարտականությունները.

3.1.3. էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

3.1.4. առանց Փոխատուի համաձայնության, Գույքը հանձնել է երրորդ անձի.

3.2. Փոխառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե՝

3.2.1. հայտնաբերվել են այնպիսի թերություններ, որոնք Գույքի բնականոն օգտագործումը դարձնում են անհնար և որոնց մասին ինքը չգիտեր ու չէր կարող իմանալ պայմանագիրը կնքելիս.

3.2.2. Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի այնպիսի հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում.

3.2.3. պայմանագիրը կնքելիս Փոխատուն նրան չի զգուշացրել Գույքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների մասին.

3.2.4. Փոխատուն չի կատարել Գույքը կամ դրա պատկանելիքները և դրան վերաբերող փաստաթղթերը հանձնելու իր պարտականությունը.

3.3. Սույն պայմանագիրը դադարում է նաև «փոխատու»-ի կողմից պահանջի դեպքում՝ 10-օրյա ժամկետում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Փոխառուն կրում է անհատույց օգտագործման հանձնված Գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե Գույքը ոչնչացել կամ վնասվել է պայմանագրին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան օգտագործելու հետևանքով, կամ այն, առանց Փոխատուի համաձայնության, հանձնել է երրորդ անձի:

4.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6.Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից սկսած և գործում է մինչև կամ անորոշ ժամկետով:

6.2. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

7. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է Օրենքով սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

8.1. Փոխատուի մահվան (վերակազմակերպման) դեպքում սույն պայմանագրով Փոխատուի իրավունքները և պարտականություններն անցնում են ժառանգին (իրավահաջորդին):

8.2. Փոխառուի վերակազմակերպման դեպքում Փոխառուի իրավունքները և պարտականությունները սույն պայմանագրով՝ անցնում են նրա իրավահաջորդին:

8.3. Փոխատուն պատասխանատվություն է կրում Գույքի օգտագործման հետևանքով երրորդ անձին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցում, որ վնասը դիտավորյալ կամ անզգուշությամբ պատճառել է Փոխառուն կամ այն անձը, որի մոտ այդ Գույքը հայտնվել է Փոխատուի համաձայնությամբ:

9. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Փոխատու	Փոխառու
Վայքի համայնքապետարան	«Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ
ք. Վայք, Շահումյան 18	ք. Վայք, Շահումյան 18
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	Բանկը՝ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ
ՀՀ 900342121028	ՀՀ 220445140050000
ՀՎՀՀ 08917547	ՀՎՀՀ 08912053
Վայք համայնքի ղեկավար՝	Տնօրեն՝
Մ. Մաթևոսյան _____	Վ. Ավետյան _____

Հավելված 1

Հ/Հ	Գույքի անվանումը / մակնիշը/	Տեխնիկական միջոցի պետհամարանիշը	Տեսակը
1	ԶԻԼ –ԿՕ-424 (ZIL-431412)	848 CM 61	Աղբատար
2	Զիլ-433362	839 CM 61	Աղբատար
3	Մազ – 551605-280	850 CM 61	Ինքնաթափ
4	Կամազ KO-440-K1 (43253)	846 CM 61	Աղբատար
5	Տեռեքս (TEREX TLB-825-8M)	2616 SL	Էքսկավատոր
6	ՈՒազ (UAZ profi)	844 CM 61	Բեռնաուղևորատար
7	Օպել (Opel vectra)	240 LL 70	Մարդատար

Փոխատու

Վայքի համայնքապետարան
ք. Վայք, Շահումյան 18
Բանկը ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
ՀՀ 900342121028
ՀՎՀՀ 08917547
Վայք համայնքի ղեկավար՝

Մ. Մաթևոսյան _____

Փոխառու

«Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ
ք. Վայք, Շահումյան 18
Բանկը՝ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ
ՀՀ 220445140050000
ՀՎՀՀ 08912053
Տնօրեն՝

Վ. Ավետյան _____

Հանձնման – ընդունման ակտ

Ք. Վայք 10.01.2023թ.

Վայք համայնքի <<Վայքի բարեկարգում>> ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վ. Ավետյանի հանձնեց և Վայքի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյանի ընդունեց հետևյալ տեխնիկական միջոցները.

Հ/Հ	Գույքի անվանումը / մակնիշը/	Տեխնիկական միջոցի պետհամարանիշը	Տեսակը
1	JAC HFC6491K1MDV	845 CM 61	Ավտոբուս
2	JAC HFC6591KH	453 CQ 61	Ավտոբուս
3	JAC HFC6491K1MDV	847 CM 61	Ավտոբուս
4	JAC HFC6491K1MDV	849 CM 61	Ավտոբուս
5	GAZ 322132-206	263 OT 61	Ավտոբուս
6	GAZ 322173-743	838 CM 61	Ավտոբուս
7	BELARUS 1221,2	3299 LS	Տրակտոր անվավոր
8	PAZ	838 LL 70	Ավտոբուս
9	UAZ	844 CM 61	Բեռնաուղևորատար
10	TLB 825-8Մ	2616 SL	Էքսկավատոր
11	ZIL KO-424(ZIL-431412)	839 CM 61	Հատուկ
12	ZIL 433362	848 CM 61	Հատուկ
13	MAZ 551605-280	850 CM 61	Ինքնաթափ
14	MAZ KC-55727-1-11	842 CM 61	Հատուկ
15	KAMAZ KO -440-K1/KAMAZ-43253/	846 CM 61	Հատուկ
16	KAMAZ KO-829D1/KAMAZ-53605/	843 CM 61	Հատուկ

Գույքը հանձնեց
<<Վայքի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի տնօրեն

_____ Վ. Ավետյան

Գույքը ընդունեց
Վայքի համայնքապետարանը ի դեմս
համայնքի ղեկավար

_____ Մ. Մաթևոսյան

Հանձնման – ընդունման ակտ

Ք. Վայք 10.01.2023թ.

Վայքի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյանի հանձնեց և Վայք համայնքի <<Վայքի բարեկարգում>> ՀՈԱԿ-ը ընդունեց հետևյալ տեխնիկական միջոցները.

Հ/Հ	Գույքի անվանումը / մակնիշը/	Տեխնիկական միջոցի պետհամարանիշը	Տեսակը
1	UAZ	844 CM 61	Բեռնաուղևորատար
2	TLB 825-8U	2616 SL	Էքսկավատոր
3	ZIL KO-424(ZIL-431412)	839 CM 61	Հատուկ
4	ZIL 433362	848 CM 61	Հատուկ
5	MAZ 551605-280	850 CM 61	Ինքնաթափ
6	OPEL A VECTRA	243 LL 70	Մարդատար
7	KAMAZ KO -440-K1/KAMAZ-43253/	846 CM 61	Հատուկ

Գույքը հանձնեց

Վայքի համայնքապետարանը ի դեմս

համայնքի ղեկավար

_____ Մ. Մաթևոսյան

Գույքը ընդունեց

<<Վայքի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի տնօրեն

_____ Վ. Ավետյան